

Ուրախութեամբ սրտի կը փութամք հրատարակել զհետեւեալ գրութիւն:

ԳՐԱԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ Ի ՇԱՄԱԽԻ, — ԵՐԿՍԵՌՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ.

ԽՖագրո-նէան Արարատ ամագրոյ.

Ա.

Հաշիւ տուողը ո՛չ թէ միայն իւր հաշիւները ճշգրտութեամբ տիրոջ տալուց յետոյ արգարանում է իւր խղճի առաջ, այլ և գրաւում է տիրոջ սէրն ու հաւատարմութիւնը, որնոր և արժանացնում է իրան աւելի ևս օգտաւէտ ու վսեմ գործերի. Այդ ընդհանրապէս է:

Անցեալ տարի յուլիս ամսոյ 4-ից սկսած կազմել ենք մի փոքրիկ ընկերութիւն Շամախոյ երկսեռ մանուկների համար մի գրադարան բանալու, շարածական իւրաքանչիւր անդամից տասն կոպտանելով, Սիրելի ընթերցողը թող չասէ թէ 10 կոպէկն ոչինչ է, շատից պէտք էր սկսած, որ շուտ հարստանար ընկերութիւնը. Մենք նայելով այն խօսքին թէ, «Կաթելով կաթելով լիճ կդառնայ», կամ այն պատճառաւ, որ իւրաքանչիւր անդամակցողը տեսանելով տուրքի սակաւամասնութիւնը, չձանձրանայ տալու նշանակեալ (ունեւորի հանար ոչինչ, ըստ չունեւորի համար շատուշատ) գրաւը. Սկզբում անդամների թիւը թաղկանուկեր 6-ից, ըստ կարճ ժամանակում հասնումէ մինչև 23 թիւը, սրանցից ոմանք թէև ինչպէս կուրորէն յօժարութեամբ անհամակցեալ են միքանի ամիս, նոյնպէս և դուրս են ընկել արդէն պտուղ չբերելու պատճառաւ, սակայն մնացեալները սիրով և ջերմեռանդութեամբ լցուցանում են իւրեանց պարտքը:

Ընկերութիւնը իւր նիստերի մէջ գործի յառաջագիմութեան մասին կազմել է կանոնադրութիւն, որը յետոյ առանձին կուղարկենք Խմբագրութեանը «Արարատ», ամագրի միջոցաւ հաղորդելու մեծարելի ընթերցողաց:

Մի քափ ամիսների ընթացքում ընկերութիւնը թէ իրանց սահմանած և թէ ուրիշներից օժանդակած տուրքերով զոյացրից հարիւր մանէթ, և

գրաւոր կերպով ուղարկեց Թիֆլիս Պ. Ստեփաննոս Նազարեանցի ազգային մտաւոր անդաստանի մէջ արդիւնաւոր մշակի վերայ, որպէս զի, նեղութիւն յանձն առնու գնել ընտրողութեամբ Գրադարանի համար կարեւոր ու ժամանակի պահանջման համեմատ թէ հայկական և թէ ռուսական գրեանք, Թէ և ուղարկած գրեանքը, ինչպէս ինքը գրում է ցաւօջ սրտի, ներկայումս չէին կարող լրցուցանել Գրադարանիս ընթերցողների քաղց՝ իւրեանց ոճի և մտքի բարձրութեամբը, ըստ լատական ընտիր գրքեր ևն. Հրատարակաւ շնորհակալութիւն յիշեալ պարոնին, որ յարկել է մեր ընկերութեան խնդիր, ըստ կարողութեան չընայելով իրան մի և նոյն ժամանակում վիճակեալ մի քանի նեղ հանդամանացը, ինչպէս յայտնվումէ իւր գրութիւնից:

Մեր անդամակիցներից ոմանք որովհետև գրտանվում են հեռաւոր տեղերում, նոյնպէս և գրեանց օժանդակութիւն անողներից. որոնք կցանկանային գէթ իմանալ մասնաւորապէս Գրադարանի գրութիւնը և ծանօթանալ նորան օժանդակողներին, ուստի, ցանկալի է ինձ առ այժմ միայն հաղորդել նոցա անունները ի իրախոյս և ի քաջակրութիւն:

- Ամենից առաջ շնորհակալութիւն Շամախում մի ժամանակվայ 32 անդամներից կազմուած ընկերութեանը, որ ըստ համարելով նուիրել են յօգուտ Գրադարանական ընկերութեան իրանց մէջ ժողովված երեսուն չորս մանէթ եօթմանստուն ու հինգ կոպէկ զրամն. Աւելորդ չեմ համարում յիշել այդ պարոնների անունները, որք են
1. Աղլքասանգր Բէդ Լալայեանց,
 2. Հայրապետ Բէդ Բաիրեանց,
 3. Նիկալայ Աաճկաճեանց,
 4. Բաղտասար Նազարեանց,
 5. Կարապետ Նիազեանց,
 6. Յարութիւն Սերդէ յեանց,
 7. Կարապետ Բալանթարեանց,
 8. Միքայէլ Աաճկաճեանց (արդէն հանգուցեալ),
 9. Գեորգ Տէր Յովհաննէսեանց
 10. Աղասի Բէդ Ամիրխանեանց,
 11. Գրիգոր Գինջեցեանց,
 12. Աղասի Բէդ Պոպովեանց,
 13. Բախիշ Քեօչարեանց,
 14. Սամուէլ Աարչամեանց,
 15. Մոպէս Ռոստամեանց,
 16. Աստուածատուր Մելիքեանց,
 17. Համարձում Ներսեսեանց,
 18. Ստեփան Լալայեանց,
 19. Յովհաննէս Միրզաբէ-

Կեանց, 20, Միքայէլ Ղարարաշեանց, 21, Միքայէլ Բէկլարեանց, 22, Գալուստ Թարրահեանց, 23, Մովսէս Աշուղեանց, 24, Կարապետ Սաղաթելեանց, 25, Յարութիւն Ղարգապետեանց, 26, Մեծլուժէր Ստեփանեանց, 27, Կարապետ Փրանգիւեանց, 28, Կարապետ Իվանեանց, 29, Արտէմ Աղէքսանդրեանց (արդէն հանգուցեալ)։ 30, Գրիգոր Մատթէոսեան Սանամեանց Բագուցի։ 31, Յովհաննէս Իւզբաշեանց և 32 Մովսէս Ղազարեանց, Կրկին շնորհակալութիւն Աղէքսանդրէկէ Լալայեանցին, որ բաց ի զրանից նուիրել է Գրադարանին ներկայ 1871 թուականի Մեղուն։

Բաղտաւոր է համարում իրան մեր ընկերութիւնը, տեսանելով որ և ուրիշ քաղաքներից գրտանվում են իրան միտք բերող ազնուամիտ պարտններ, որպիսիք են— Թիֆլիսից Պետրոս Միմէոնեանցը, որ նուիրել է Մեղուի Խմբադրութեան անունով գրքոյկներ։ Պետերբուրգից Միքայէլ Մ. Միանսարեանցը, որ յայտնի է ընդհանուրին իւր աղղասիրական գործունէութեամբը, ուղարկել է գրեանք և բնական փետուրներով նկարած թըռչունների պատկերներ մեր Գրադարանի և օրիորդոց ուսումնարանի համար և Բագուից նոյնպէս Մովսէս Ձոհրապեանցը իւր աշխատասիրածներից, Թող ընդունեն այդ յիշեալ ազնիւ պարտնները մեր ընկերութեան շնորհակալիքը։ Նոյնպէս և Շամախեցի պարոն Սամուէլ Բագիբեանցը որ Բագուից ուղարկել է Գրադարանի համար առատաղից քաշ անելի մի գեղեցիկ մեծ կանթեղ։

Շամախում Գրադարանին գրքերով օժանդակող Սրբազան Հայր Անդրէաս սրբեպիսկոպոսը, Ազգ. Հոգև. Գարոցի հոգաբարձութիւնը և պատուելի երիտասարդները շնորհակալութեան ու գովութեան արժանի են։ Առաջնոյն երբեմնապէս քաջալերութիւնը մոտիմարում, վառում ու կազդուրում է ընկերութեան ամեն մի անհատի սիրտը. իսկ երրորդի այսինքն յիշեալ երիտասարդների՝ որ մեծ մասով Գրագ. ընկ. անդամներիցն, սերը դէպի այդպիսի գործը՝ յուսադրում է ինչպէս յիշեալ Հօրը, նոյնպէս և Շամախեցիներին, Գրտնավաստակ ընթերցող, եթէ հարցասիրելի է 2եզ իմանալու և դոցա կենդանի անունները, հետևեալն են — 1, Շամախեցի Փիլիպպոս վարդապետ

Նաջարեանց (միտքան սուրբ Երուսաղէմի)։ 2, Աւագ սարկաւազ Բաղդասար Մանուկեան. 3, Աւագ սարկաւազ Աւետիք Փինաշեանց (արդէն ի Բագու)։ 4, Պօղոս Ներսեսեանց. 5, Հայրապետ Ղուկասեանց. 6, Յովհաննէս Միրզաբէկեանց 7, Աղէքսանդր Մելիք — Շահնազարեանց 8, Շահնաշ Վլասեանց. 9, Գասպար Ներսիսեանց, 10, Ներսէս Արիւեանց. 11, Կոստանդին Մարտիրոսեանց. 12, Մարտիրոս Թումանեանց. 13, Հայրապետ Խալաբեանց, 14, Նիկողայ Ղարգապետեանց. 15, Գալուստ Տէր Բաղդասարեանց (արդէն քահանայ ի Ղուրպ)։ 16, Աղէքսանդր Տէր Սահակեանց։ Եւ գաւառական ուսումնարանից ըստացաւ ընկերութիւնը գրեաց նուէրն։

Դոցա նուէրքը թէ որքան և ինչպիսի գրեանք են յետոյ կիմացուի ընդհանուր հաշւի մէջ. որ ժամանակին ի լոյս կընծայվի մանրամասնաբար կանոնադրութեան հետ միասին։

Ով իմ ֆազնիւ ընկերներ, ուրախանանք ու աւելի՛ քաջալերվինք որպէս զի դտնվում են գնահատողներ ընկերութեանը, և որքան կարելին է դէպի յառաջ տաննէք մեր ընթացքը այդ գործի մէջ, շնայելով ոչ մի արգելքի, որ յառաջ կաւնիւթական կողմանէ, շնայելով մեր քաղաքի դրութեանը, որ չունի իւր առաջվայ շքեղութիւնը փառքը և հարստութիւնը, որոնց պատճառ եղել են բազմիցս վնասարեւր գեանաշարժը և առևտուրական ձախողակի հանգամանքները։ Մենք այրի կնոջը հետևելով. չինս պենք վերջին լուծայն այդ գանձանակի մէջ գցելու։ Եթէ վերոյիշեալ ձախող դէպքերը նիւթականի վերարեքմամբ մեզ ամաշեցնում են այլոց առաջ մեր պարտքերը լիովին կատարելու, գոնէ ճանաչենք դրանց կատարելապէս և կատարենք ըստ կարողութեան, որքան ներում են մեզ միջոցները, որ մի՛ գուցէ զուրկ մնանք երկու կողմից, նիւթաւոր ասեմ և մտաւոր։

Բ.

Բացի մեր յիշեալ ընկերութենից կայ այստեղ և մի ուրիշ ընկերութիւն հաստատված ու ապահովված Հոգևոր բարձր իշխանութենից 1870 թ. Օգոստոս ամսոյ մէջ յիշեալ Սրբազան Առաջնորդի առաջարկութեամբ. որոյ նպատակն է որսհ-

պանել Համախում մի օրիորդաց ուսումնարան իւրաքանչիւր անդամից առնելով տարեկան տասն մանէթ, Բաղդաւոր կլինի ի թիւս այլոց այդ ընկերութիւնը, եթէ Վեհափառ Տէրը և սորան իւր ձեռքից եկած բարերարութիւնը չխնայէ: Այդ ընկերութեան մասին ես լուծ եմ պիտի, թողով մի սիրելի եղբօր կշռադատութեան, որին յանձնված է ժամանակով դորա մասին հաշիւ տալը: Միայն կցանկանամ այդ ընկերութեան երկարատե և արդիւնաւոր լինելուն, վասնզի դորա հաստատութիւնը կեանք է այն սկզբունքի, որից յառաջ պիտոյ է գան բարեկիրթ ծնօղներ:

Եւ եթէ ընթերցողին ցանկալի է ծանօթանալ փոքր ի շատէ և տղայոց ուսումնարանին, այսքան կարող եմ ասել թէ — բաղդատելով ուրիշ քաղաքների հարուստ ուսումնարանների հետ, լաւ և յուսալի է իւր ընթացքում: Թող ոչ որ չմեղադրէ Համախեցիներին իւրեանց ուսումնարանի աղքատ լինելուն պատճառաւ, թող մեղադրողը մի խորը թափանցէ, ապա կտեսնէ որ Համախեցիք իրանց մէջ քանի տեսակ գաղտնի ցաւեր ունին, որ միայն իրանց է յայտնի, և այդ միջոցում դարձեալ չեն խնայում ըստ կարողութեան իւրեանց հատուցանելիքը: Համախեցիք զո՛հ պիտոյ է լինին ինչպէս Հոգաբարձուներից, նոյնպէս և նոցա նախադաս սրբազան Հայր Անդրէասից, պատճառ՝ դոքա մեծ մասով իւրեանց խրախուսող ու քաջալերող խօսքերովն են պահպանում անվհատ դրութիւնում՝ ուսումնարանի մէջ աշխատողներին, Ընորհակալութեան արժանի է և պարոն Գուկասեանցը, որ շնայելով իւր ուժ կի սակաւութեանը, յանձն է առել կառավարելու և տեսչական պաշտօնը նոյն ուսումնարանի: Աւրեմ կեցցեն ամեն մի ուսումնարանի հաստատութեան ու յառաջապիմութեան շարժառիթները, որոնցով հոգի են առնում իւրեանց նպատակներին հասանելու:

Այս տարի հոգաբարձօք տեսանելով որ ուսումնարանի համար բաժին գրել տալը յաջող ընթացք չէ ունենում, բաց ի ձանձրութիւնից, խորհրդակցելով իրանց Նախագահի Սուրբ Հօր հետ, սահմանեցին, որ պատրաստական դասատան Ա. և Բ. կարգի աշակերտներից առնեն տարեկան 2 մանէթ, և Գ. բաժանման 3 մանէթ. իսկ առա-

ջին դասատան աշակերտներից 4, և երկրորդ դասատան 5 մանէթ, և 30-ի չափ ձրիաբար աղքատներից ուսուցանել, եթէ միայն յայտնի աղքատ են, որք և չեն կարող վճարել իւրեանց հատուցանելիքը:

Ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և այս տարի յաջող վերջացաւ հարցաքննութիւնը աշակերտաց, Երկու շաբաթ ուսումնարանի մէջ քննելուց յետոյ, ամսոյս 20-ին եղև հրապարակական համաժողովայն հարցաքննութիւն ու պարզեարախութիւն եկեղեցուց մէջ: Աւր կարդացին ճառեր — նախ, կրօնի ուսուցիչ աւագ սարկաւազ Բաղդասարն Մանուկեանց, որ կամենում էր ցոյց տալ ուսումնարանի նշանակութիւնը և ծնօղաց սերը դէպի նա: Բ. որդ գասատան աշակերտ Ներսէսն Արևելեանց (Ռուսերէն) և ապա Հայերէն Գաւիթըն Ներսիսեանց, որոնց ճառերի բովանդակութիւնն էր երախտագիտութիւն ու յարգածանաչութիւն դէպի իւրեանց երախտաւորները: Աշակերտաց երգելով ու Սրբազան Հօր բարերանութեամբը վերջացաւ հանգեսը: Սակայն խիղճս մտաբախում է սրտիս, որ խոտովանեմ և այս թէ ծընողները սառն են և չունին երթևեկութիւն ուսումնարանի մէջ տեսանելու իրանց զուակաց թէ հեղապիտութիւնը և թէ փութաջանութիւնը: Գիտեմ շատերը պատճառ կան են թէ մեր գալը կպատճառէ մեզ մեր դործերից ընկնել և զոհուիլ օրական ապրուստից, որով պէտք է կառավարվին մեր ընտանիքը: Խօսքս ամեն օր ուսումնարան գալու և նորա համար չէ, որ մենակ է կամ այնպէս զբաղված գործով, որից հեռանալն դժուար է. կան այնպիսիք, որոնք ապահով կառավարութեան և օգնութեան կողմից փոխանակ աստ ու անդ թափառելու կարող են զոհել և մի տասն բոպէն ուսումնարանի մէջ, որոնց ներկայութիւնը ինչպէս իւրեանց զուակաց նոյնպէս և ուսուցչաց համար խրախոյս է:

Յո՛ւնանէ՛ք Սերպաբէգէտեանց

Ի 26 Յունիսի 1871 թի
Ի Երևանի